ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(Երևան, 24 մարտի 2008 թ.)

Հարությունյան ընտանիքի սգակիր անդամներ, սիրելի ներկաներ,

Այսօր հրաժեշտ ենք տալիս մեծանուն ճարտարապետ, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանին՝ մեր ժողովրդի և մեր Սուրբ Եկեղեցու ազգասեր, հավատավոր, նվիրյալ զավակին: Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մեր հոգու անկեղծ ցավակցությունն ենք բերում հանգուցյալի ընտանիքին, բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Հրաշքով փրկվելով ցեղասպանությունից և որբության մեջ անցկացնելով մանկության տարիները՝ լուսահոգի Վարազդատ Հարությունյանը կյանքի ողջ ընթացքին հայրենի Վան քաղաքի հանդեպ աննվազ սերը վերածեց հարազատ ժողովրդին բոլորանվեր ծառայելու նախանձախնդրության՝ ստեղծելով հարուստ ժառանգություն, որը նրա անունը արժանիորեն դասել է հայ ճարտարապետական արվեստի երախտավորների շարքին:

Վարազդատ Հարությունյանը ստանձնել է բազմաթիվ պատասխանատու հանձնառություններ մեր երկրի կյանքում՝ գլխավորել Հուշարձանների պահպանության կոմիտեն, ապա Պատմական հուշարձանների պահպանության ընկերությունը, եղել Հայաստանի Ճարտարապետների Միության նախագահ, երկար տարիներ վարել Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Ճարտարապետության ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտոնը, հեղինակել գիտական աշխատություններ ու հայկական ճարտարապետության ավանդները ներկայացրել բազմաթիվ միջազգային գիտաժողովների ընթացքին՝ ամենայնի նպաստելով հայ ճարտարապետական արվեստի զարգացմանը և արժանանալով պետական բազում մրցանակների, կոչումների ու պարգևների:

Լուսահոգի Վարազդատ Հարությունյանը առանձնակի հոգածություն դրսևորեց ճարտարապետների նոր սերունդ կրթելու ազգանվեր գործի հանդեպ՝ տասնյակ տարիներ իրականացնելով մանկավարժական շնորհակալ գործունեություն: Այսօր նրա սաները մասնագիտական բարձր պատրաստվածությամբ և ազգային ու հոգևոր մեր արժեքների հանդեպ աննվազ սիրով ու նախանձախնդրությամբ շարունակում են հայ ճարտարապետության լավագույն ավանդները՝ կարևոր մասնակցություն բերելով մեր երկրում քաղաքաշինական ու եկեղեցաշինական տարբեր ծրագրերի իրականացմանը:

Անգնահատելի են հանգուցյալի ծառայությունները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետական խորհրդի բազ-

մամյա նախագահ: Տակավին Վազգեն Ա Հայրապետի գահակալության առաջին տարիներից մինչև իր կյանքի վերջը ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը իր կարողություններն անբողջանվեր սիրով ի սպաս բերեց մեր դարավոր եկեղեցիների ու սրբավայրերի նորոգությանն ու բարեզարդմանը: Նրա բեղմնավոր գործունեությունը և ծառայությունները մեր ժողովրդին ու Հայրենիքին, մեր Եկեղեցուն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին արժանապես գնահատված են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարձր պարգևներով՝ Հայրապետական Կոնդակներով և «Սուրբ Ներսես Շնորհալի», «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշաններով: Արժանավոր գործերի հարուստ վաստակով հոգելույս Վարազդատ Հարությունյանը անմահ հիշատակ է թողնում երախտագետ մեր ժողովրդի հոգում:

Մեր հոգեբուխ աղոթքն է, որ Բազումողորմ Աստված երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Իր ծառայի՝ նորոգ հանգուցյալ Վարազդատ Հարությունյանի լույս հոգին և Սուրբ Հոգու շնորհով Հարությունյան ընտանիքի սգակիր անդամներին պարգևի մխիթարություն ու սփոփանք:

Աղոթք և օրհնություն ննջեցյալի անանց հիշատակին: